

№ ԳԵՂԱՐԿԵԱՏԱԿԱՆ ԳՐԱԴՐԱՆ 4

ՄԱՅՍԻՄ ԳՈՐԾԻ

ՔԱԱՆՎԵՑ ԹԱ ՄԵԿ

1926

891.71

գ-83

ՊԵՏՀՐԱՏ  
ԱՐԱԿԱՆ

27 AUG 2008

№ ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ 19 NOV 2010  
4

891.71

ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿԻ

Գ-28

այց.

ՔՍԱՆՎԵՑ ՅԵԿ ՄԵԿ

381-23/Հ 28

1001  
556

Թարգ. Ա. Մ Ե Ռ

□□□□□



Հ. Ա. Խ. Հ. ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ № 322

ՄՈՍԿՎԱ

1926

21 MAR 2013

10804

## ՔԱԱՆՎԵՑ ՅԵՎ ՄԵԿ

Քսանվեց մարդ եյինք մենք—քսանվեց կենացնի մեքենաներ, վոր փակված խոնավ նկուղում, առավոտից մինչև յերեկո խմոր եյինք հունցում և թխում բլիթներ։ Մեր նկուղի պատուհանները բացվում եյին մի փոսի վրա։ Նրանց աղյուսները բորբոսնել եյին խոնավությունից։ Փեղկերը գըսից ծածկված եյին յերկաթե ցանցով, իսկ ալյուրի փոշին այնքան եր նստել ապակիների վրա, վոր արեի լույսը հազիվ եր թափանցում ներս։ Մեր տերը յերկաթե ցանցերով պատել եր պատուհանները նրա համար, վոր չլինի թե իր մի կտոր հացը տայինք աղքատի, կամ մեր այն ընկերներին, վորոնք թափառում եյին անգործ ու սոված։ Մեր տերը մեղ ավագակ եր անվանում և ճաշին հոտած միս տալիս...

Մենք խեղդվում եյինք այդ նեղ, քարե տուփի մեջ, վորի ցածր առաստաղը բռնել եր մուրն ու վոստայնը։ Մեղ ճնշում եյին այդ

հաստ պատերը, վորոնց միակ զարդն եր կեղտն  
ու թուքը... Վեր եյինք կենում առավոտը ժամի  
հինգին՝ քնատ, բթացած ու թմրած։ Ժամը 6-ին  
արդեն նստում եյինք սեղանի շուրջը և սկսում  
բլիթներ շինել, Խմորը արդեն պատրաստ եր լի-  
նում, վորովհետեւ ընկերների մի մասը աշխա-  
տում եր մեր քնած ժամանակ։ Յեվ ամբողջ որը,  
առավոտից մինչև իրիկվա ժամի տասը, մի քա-  
նիսը սեղանի վրա խմորի գնդերն եյին բացում  
ու ւերեմն թափ տալիս իրենց, վոր միորինակ  
աշխատանքից չփայտանան. իսկ վոմանք այդ ժա-  
մանակ խառնում եյին ջուրն ու ալյուրը։ Ամբողջ  
որը տիսուր ու միորինակ բխկում եր յեռացող  
ջուրը կաթսայում, ուր յեփ եյին գալիս խմորի  
բլիթները։ Հացթուխը արագ ու ջղային թափով  
շարունակ պտույտ եր գալիս վառարանի շուրջ  
և տաք աղյուսների վրա նետում խմորի խաշված  
կտորներ։ Առավոտից մինչև յերեկո վառարա-  
նում այրվում եր փայտը։ Նրա կարմիր փայլը  
խաղում եր մեր պատին, և կարծես թե ծի-  
ծաղելիս լիներ մեզ վրա։ Ահագին վառարանը  
նման եր հեքիաթային, այլանդակ հրեշի, վորը  
դուրս եր արել իր այլանդակ գլուխը, բացել  
իր կրակով լիքը բերանը, ագահությամբ մեզ եր  
նայում, փշում եր իր տաք շունչը մեր յերե-  
սին և ուղում եր մեզ լափել։ Վառարանը իր

ճակատին ուներ յերկու խոռոչներ։ Այդ խոռոչնե-  
րը կարծես թե լինեյին հրեշի բարբարոս աչքերը,  
վորոք նայում եյին միշտ նույն մուայլ, սառը  
հայացքով։ Այդ աչքերը, թվում եր թե ձանձրացել  
եյին սարուկներ տեսնելուց, և չսպասելով նրան-  
ցից մարդկային վորեե բան՝ սկսել եյին ատել  
այդ սարուկներին։

Յեվ այսպես, որեցոր, աշխատում եյինք  
մենք ալյուրի փոշու, դրակած բերված ցեխի ու  
կեղտի մեջ կորած մեր գարշահոտ նկուղում։  
Մենք հունցում եյինք խմորը և բլիթներ շի-  
նում։ Ալյուրը մենք շաղախում եյինք մեր քըր-  
տինքով, և մենք ատում եյինք մեր աշխատան-  
քը, վորովհետեւ մենք չեյինք կարողանում ուտել  
այն՝ ինչ մենք եյինք շինում։ Բլիթներից մենք  
գերադասում եյինք սև հացը։ Նստած յերկար  
սեղանի շուրջը, իննը իննի դիմաց՝ մենք ամ-  
բողջ որը շարժում եյինք մեր ձեռներն ու մատ-  
ները, և այնքան սովորել եյինք այդ աշխատան-  
քին, վոր արդեն ամեն ինչ անում եյինք ան-  
գիտակցաբար, ու չեյինք հետեւում մեր շար-  
ժումներին։ Շալունակ նստած լինելով իրար  
դիմաց, մենք այնքան եյինք իրար յերեսին նա-  
յել, վոր յուրաքանչյուրը արդեն անգիր եր  
արել մյուսի յերեսի բոլոր ծալքերը։ Խոսելու բան  
չունեյինք մենք, և սովոր եյինք լուել—յեթե

յերբեմն չելինք հայհոյում իրար—վորովհետև  
միշտ ել կճարվի հայհոյելու առիթ՝ մանավանդ  
ընկերների միջև—բայց և այնպես մենք շատ  
քիչ ելինք իրար հայհոյում, Յեվ միթե մեղավոր  
եր նա՛ ով հայհոյում եր, յերբ նա կիսով չափ  
մեռած եր համարյա, յերբ նա հոգնել, ցամաքել  
եր, յերբ դաժան աշխատանքը ճնշել եր նրա  
հոգին, Բայց լոռությունը սարսափելի և տանջա-  
լից ե միայն նրանց համար, ովքեր արդեն  
ասել են ամեն ինչ և ասելու ել բան չունեն,  
այն մարդիկ, վորոնք դեռ չեն խոսել՝ նրանց հա-  
մար շատ հասարակ և տանելի յե լոռությունը...  
Յերբեմն մենք յերգում ելինք, և մեր յերգերը  
սկսում ելին այսպես. աշխատանքի ժամանակ,  
հանկարծ մեկը մի խոր հոգոց եր քաշում բե-  
ղարած ձիու նման, և կամաց-կամաց սկսում  
եր ձիգ տալ մի վորեւ տիսուր յեղանակ: Յեր-  
գում եր մեղանից մեկը, և մենք լսում ելինք  
նրա յերգը, վոր թողնում, խեղդվում եր նկու-  
զի ծանր, ճնշող առաստաղի տակ, ինչպես կրակն  
ընկած խոնավ տաշեղ. հետո յերգողին միանում  
եր մի ուրիշը, և արդեն յերկուսով՝ սկսում ելին  
թախծոտ, խաղաղ մի յեղանակ: Հանկարծ միան-  
դամից մի քանի ձայներ մեջ ելին ընկնում:  
Յերգը մեկ բորբոքվում եր, դառնում հուզված  
ալիք, վորի ժամանակ, մեր խոնավ, քարե բան-

ալի պատերը կարծես յետ ելին մղվում:

Յերգում ելին քսան վեցը միանգամից. բարձր,  
խոպոտ ձայնը լեցնում եր նկուղը, և նկուղը  
նեղ եր յերգի համար. մեր յերգը դիպչում եր  
քարե պատերին, տնքում, լալիս եր: Մեր սիրտը  
ծակում եր ինչ վոր վիշտ, յերգը նորոգում եր  
մեր ցավերը... Յերգողները խորը և գառն հոգոց  
ելին քաշում. յերբեմն մեկը լոռում եր և լսում  
եր ընկերներին, և նորից խառնում իր ձայնը  
ընդհանուր ալիքին: Մի ուրիշը հառաչում եր,  
աչքերը փակում և շարունակում յերգել, կար-  
ծես թե յերգը նրան թվելիս լիներ ինչ վոր մի  
հեռավոր, լուսավոր ճանապարհ, վորով նա դուրս  
եր գալիս մի զով աղբյուր...

Բոցը ճարտարակում եր նորից, հացթուխը նո-  
րից պատուա եր դալիս վառարանի շուրջ, ջուրը  
բխկում եր կաթսայում և կրակի փայլը նորից  
խաղում եր պատի վրա ու լուռ ծիծաղում... իսկ  
մենք յերգում, թափում ելինք մեր սրտի խուլ  
դառնությունը, լալիս ելինք մեր որը, մենք, վոր  
ստրուկներ ելինք զրկված արեի լույսից: Այդ-  
պես ելինք ապրում մենք՝ քսան վեց հոգի: Մեծ,  
քարաշեն տան նկուղը այնքան նեղ եր մեզ  
համար, վոր թվում եր, թե այդ յերեք հարկա-  
նի քարե տունը շինել են հենց մեր ուսերի  
վրա...

Բայց յերգից բացի, մենք ունենք նաև մի  
ուրիշ մխիթարական, ինչ վոր սիրելի բան, վոր  
մեզ համար փոխարինում եր արեին։ Մեր տան  
յերկրորդ հարկում կար մի հարուստ դերձակա-  
նոց, ուր բազմաթիվ աղջիկների մեջ ապրում եր  
մի աղախին՝ տաճակվեց տարեկան Տանյան։ Ա-  
մեն առավոտ, մեր նկուղի դռան կեղտոտ ապա-  
կու յետև հայտնվում եր նրա փոքրիկ, վարդա-  
գույն դեմքը։ Նրա կապույտ աչքերը փայլում  
եյին անհոգ և ուրախ, և նա զիլ, գորովալիր  
ձայնով կանչում եր մեզ։

— Բանարկվածնե՞ր, ինձ բլիթ տվեք։

Մենք բոլորս շուռ եյինք գալիս դեպի դուռը  
և ուրախ, սրտի մեծ բերկրանքով նայում եյինք  
այդ աղջկա պայծառ յերեսին, իսկ նա ժպտում  
եր շարունակ։ Մենք բավականություն եյինք  
ստանում, յերբ տեսնում եյինք նրա փոքրիկ  
քիթը՝ վոր կպչում եր ապակուն, և փայլուն,  
սպիտակ ատամները, վորոնք վարդավառ շրբ-  
թունքների միջից ժպտում եյին ապակու յետև։  
Մենք նետվում եյինք դեպի դուռը և կոխոտում  
իրար, վոր դուռը բացենք։ Ահա նա—այնպես  
զվարթ, այնպես սիրալիր։ Նա ներս եր մտնում  
և գոգնոցը բացելով, գլուխը քիչ թեք բռնած  
ժպտում եր մեր յերեսին, նրա թափ, շագանա-  
կագույն մաղերը թափած եյին լինում ուսե-

րին։ Մենք, կեղտոտ, այլանդակ, թախծոտ մար-  
դիկ՝ մտիկ եյինք տալիս նրան և հրճվում։  
Մեր դուռը մի քանի աստիճան բարձր եր հա-  
տակից, և մենք մեր գլուխները վեր բռնած,  
նայում եյինք նրան, բարի լույս մաղթում, և  
ասում նրան այնպիսի խոսքեր, վոր դուցե մի-  
այն նրա համար եյինք պահել մեր սրտերում։  
Նրա հետ խոսելիս մեր ձայնը մեղմանում եր,  
մեր հանաքնները դառնում եյին ավելի քնքուշ։  
Նրա նկատմամբ մեր վերաբերմունքը բոլորովին  
ուրիշ տեսակ եր։ Հացիթուխը վառարանից հանում  
եր ամենից լավ յեփված, վարդագույն բլիթ-  
ները և ճարպիկ շարժումով գցում նրա գոգնոցը։

— Տե՛ս, տիրոջ յախա չտաս, հա—իսկ նա  
կիսով չափ ծիծաղելով, զվարթ, դառնում եր  
դեպի դուռը ու ձչում։

— Մնաք բարո՛վ, բանարկվածնե՞ր, — և  
շտափ, կորչում եր թոչնիկի նման։

Այդքանը միայն... բայց դեռ յերկար ժա-  
մանակ, նրա գնալուց հետո, մենք խոսում եյինք  
նրա մասին։ Շարունակ նույնն եյինք ասում,  
ինչ ասել եյինք յերեկ և առաջ, վորովհետև և  
նա, և' մենք, և ամեն ինչ, վոր կար մեր շուրջը՝  
վոչինչ չեր փոխվում և նույնն եր, ինչ յերեկ ու  
առաջ... Շատ ծանր ու տանջալից բան և,  
յերբ մարդը ապրում ե, ու նրա շուրջը վոչինչ

չի փոխվում, և յեթե այդ միորինակությունը  
սպանում նրան, ապա որից որ, շրջապատը նրա  
համար դառնում ե ավելի անտանելի... Մենք  
հաճախ եյինք խոսում կանանց մասին, և յեր-  
բեմն այնքան կոպիտ՝ վոր ինքներս չեյինք ու-  
զում մեզ լսել. և այդ հասկանալի յեր, վորով-  
հետև այն կանանց, վորոնց մենք ճանաչում  
եյինք՝ արժանի չեյին ուրիշ խոսքերի. Բայց  
Տանյայի մասին մենք յերբեք վատ բան չեյինք  
ասում, յերբեմն նույնիսկ, մենք վոչ միայն  
թույլ չեյինք տալիս մեզ դիպչել նրան, այլ և  
զգուշանում եյինք վորոնե անհամ բան ասել:  
Գուցե այդ նրա համար, վոր նա յերկար չեր  
մնում մեզ մոտ, նա մի բողք միայն, մեր մոռայլ  
նկուղում ցոլում եր յերկնքից ընկած աստղի  
նման և իսկույն անհայտանում: Նա շատ գեղե-  
ցիկ եր և փոքրիկ իսկ ամեն մի գեղեցիկ բան,  
յերբեմն, նույնիսկ կոպիտ մարդկանց ստիպում  
ե դեպի իրեն տաձել հարգանք: Գուցե և նրա  
համար, վոր թեև մեր տաժանակիր աշխատան-  
քի պատճառով մենք դարձել եյինք բութ յեղ-  
ներ՝ այնուամենայնիվ մարդ եյինք, ինչպես  
մյուս մարդիկ, և չեյինք կարող ապրել ա-  
ռանց վորոնե բանի, վորին կարելի լիներ սի-  
րել: Նրանից լավ վոչինչ չկար մեր շուրջը, և  
նրանից բացի վոչ վոք ուշադրություն չեր

դարձնում մեզ՝ նկուղում փակված կենդանի  
մարդկանց վրա... Յեվ վերջապես, յերեի նրա  
համար, վոր մենք այսպես թե այնպես, նրան  
հաշվում եյինք մերը, մեզ թվում եր, վոր նա  
ապլում ե միայն մեր տված բլիթներով, և մենք  
սրբագան պարտք եյինք համարում նրան տալ  
ամենից լավ, տաք բլիթները: Որից որ, մենք  
ավելի սովորում, կապվում եյինք նրան: Բայց  
բլիթներից, մենք Տանյային յերբեմն խորհուրդ-  
եյինք տալիս,—վոր նա տաք հագնվի, սանդուխ-  
ներից արագ չիջնի, վոր փայտի ծանր կոճեր  
չվերցնի: Նա լսում եր մեզ, ժպտում, յերբեմն  
ծիծաղում, կամ բոլորովին չեր լսում: Բայց  
մենք չեյինք վիրավորվում այդ բանից, մեզ  
հարկավոր եր միայն ցույց տալ, վոր հոգ ենք  
տանում նրա մասին:

Հաճախ, նա մեզ եր դիմում և խնդրում  
վորեւբան, որինակ՝ բանալ մառանի ծանր դուռը,  
փայտ ջարդել,—և մենք ուրախությամբ, և նույն-  
իսկ հպարտությամբ անում եյինք այն, ինչ ինդ-  
րում եր նա:

Բայց յերբ մեղանից, մեկը խնդրեց նրան  
կարկատել իր միակ շապիկը, նա զզվանքով  
շուռ եկավ և ասաց.

— Հենց եղ եր պակաս... յես...

Մենք շատ ծիծաղեցինք մեր հիմար ընկերի

վրա և այլես վոչինչ չեյինք խնդրում Տանյային։  
Մենք նրան սիրում եյինք—այդքանը բավական  
եր։ Մարդ միշտ ել սիրում ե մեկին, թեկուզ այդ  
մեկը սոսկալի ճնշում ե նրան, թունավորում  
նրա կյանքը, բայց ելի նա սիրում ե և հարգում  
իր սիրածին։ Մենք պետք եր, վոր սիրեյինք  
Տանյային, վորովհետև ել վոչ վոք չկար, վորին  
սիրեյինք։

— Ի՞նչ ենք յերես տալիս եդ աղջկան։  
Ապա՝ ի՞նչ ա նա։ Շատ ենք դրա հետը գլուխ  
դնում…

Բայց մենք վրա եյինք ընկնում այդ մե-  
կին, և ստիպում, վոր ճենը իրեն քաշի։ Մենք  
պետք եր սիրեյինք վորեե բան։ Այդ սերը մենք  
գտել եյինք նրա մեջ։ Յեկ այն, ինչ վոր սի-  
րում եյինք մենք՝ քսան վեց հոգի՝ սրբություն  
եր մեզ բոլորիս համար։ Ով մեր դեմ գնար՝  
նա մեր թշնամին եր։ Գուցե այնքան ել լավ  
չեր մեր սիրո առարկան, բայց մենք քսան վեց  
հոգի, ուզում եյինք, վոր այն, ինչը թանգարին  
եր մեզ համար, ուրիշների համար ել լիներ հար-  
գելի։

Մեր սերը նույնքան թափով եր, վորքան  
ատելությունը…

Բացի բլիթներից, մեր տերը վաճառում եր

նաև խմորեղեններ։ Խմորեղենը թխվում եր  
նույն տան մեջ, մեր պատի մյուս կողմը։ Բայց  
խմորեղեն շինողները չորս հոգի եյին, վորոնք  
իրենց հեռու եյին պահում մեղանից։ Նրանք հա-  
մարում եյին իրենց գործը ավելի մաքուր, և  
արժան չեյին համարում գալ մեր նկյուղը։ Բա-  
կում յերբ հանդիպում եյին մերոնց՝ ծիծա-  
ղում եյին։ Մենք ել չեյինք գնում նրանց մոտ։  
Մեր տերը չեր թողնում, վոր մի գուցե խմո-  
րեղեն թոցնենք, Մենք չեյինք սիրում խմորե-  
ղեն շինողներին, վորովհետև նախանձում եյինք  
նրանց։ Նրանց աշխատանքը մերից հեշտ եր  
և նրանք ստանում եյին ավելի՝ քան մենք։  
Նրանք ավելի լավ եյին կերակրվում, նրանք աշ-  
խատում եյին մեծ, լուսավոր սենյակում ու բո-  
լորը մաքուր եյին, առողջ։ Յեկ մենք ատում  
եյինք նրանց։ Մենք բոլորս ել գեղնած եյինք,  
ցամաքած։ Մեզանից յերեքը հիվանդ եյին սի-  
ֆիլիսով, մի քանիսը բորոտ եյին, իսկ մեկը  
կծկվել եր հողացավից։ Տոն որերին նրանք կո-  
կիկ հագնվում, զբոսնում եյին այգում, յերկուսը  
նույնիսկ նվազարաններ ունեյին։ Իսկ մենք հագ-  
նում եյինք ելի նույն ցնցոտիները, ելի բորիկ  
եյինք, կամ արեխներ հագած, վոստիկանները  
մեզ չեյին թողնում այգին,—ինչպես կարող  
եյինք մենք սիրել խմորեղեն շինողներին…

Յեվ ահա, մի որ մենք իմացանք, վոր  
նրանց հացթուխը սաստիկ հարբել եւ և տերը  
նրան արձակել: Հացթուխի տեղը յեկավ ուրիշը  
—մի զինվոր: Ասում եյին, վոր նա հագել ե  
կերպասե բաճկոնակ, և ժամացույցին վոսկի  
շղթա ունի: Մենք շատ եյինք ցանկանում տես-  
նել, թե այդ ինչ մարդ ե, և հետաքրքրությու-  
նից, շարունակ գուրս եյինք գալիս բակը:

Բայց նա ինքը յեկավ մեր նկուղը: Վոտքի  
հարվածով բացեց գուռը և թողնելով կիսաբաց,  
կանգնեց սեմին և ժպտալով ասաց.

— Բարի աջողում, տղերք:

Յուրա ոդը դուսից ներս խուժեց ամպի  
գուլաներով: Նա կանգնել եր սեմին և վերելից  
ներքեւ, նայում եր մեզ վրա: Նրա դեղնավուն,  
խնամքով վոլորված բեխերի տակից յերեսում  
եյին խոշոր, դեղին ատամները: Նրա բաճկոնա-  
կը իսկապես վոր մի առանձին բան եր, կա-  
պույտ, շքեղ: Կոճակները գեղեցիկ քարեր եյին:  
Նրա շղթան ել...

Գեղեցիկ տղամարդ եր այդ զինվորը, այն-  
պես բարձրահասակ, առողջ, յերեսը կարմիր:  
Նրա խոշոր, փայլուն աչքերը ժպտում եյին ու-  
րախ և բավական: Նա զլսին դրել եր հացթու-  
խի սպիտակ, լավ ոսլայված գդակ, իսկ մաքուր  
զոգնոցի տակից յերեսում եյին խնամքով սըրբ-

ված. կոշիկներն ու գեղեցիկ գուլպան:

Մեր հացթուխը հարգանքով խնդրեց նրան  
դուռը փակել: Նա առանց շտապելու արեց այդ  
և սկսեց հարցնել մեր վիճակի ու տիրոջ մա-  
սին: Մենք իբրար խոսքը կտրելով, ասում եյինք  
նրան, վոր մեր տերը անխիղճ ե, ավագակ,  
ամեն բան՝ ինչ կարելի յե ասել տիրոջ մասին:  
Զինվորը լսեց, բեխերը վոլորեց և սկսեց մտիկ  
տալ մեզ մեղմ, ցավակցական հայացքով:

— Իսկ ձեզ մոտ այստեղ աղջկերք շատ  
կան...—ասաց նա հանկարծ:

Մի քանիսը ծիծաղեցին, վոմանք գլուխը  
քաշ արին, իսկ մեկը զինվորին ասաց, վոր  
այստեղ իննը աղջիկ կա:

— Ոգտվում եք,—հարցրեց զինվորը և ժըպ-  
տաց աշքի տակով:

Նորից մենք ծիծաղեցինք, վախիկ, ամոթ-  
խած ծիծաղով... Գուցե շատերը ցանկացան  
ցույց տալ իրենց, վոր իրենք ել ընդունակ, շա-  
հել աղամարդիկ են, բայց վոչ վոք բերանը չբա-  
ցեց, վոչ վոք վոչինչ չասաց: Միայն մեկը ցածր  
ձայնով շշնջաց.

— Մեզ ո՞վ ա...

— Դէ իհարկե, ձեզ համար դժվար ա,  
— հավաստի կերպով վրա բերեց զինվորը շա-  
րունակ աչքերը շուռ տալով մեզ վրա, —

դուք ինչ վոր... են չեք... Զեք կարում ձեզ  
պահել... կարգին տեսք, բան պիտի ունեալ: Իւկ  
կին ասածը՝ նա սիրում ա վոր տղեն կարգին  
լինի, վրեն շնորք ունենա՝ ինչ հարկավոր ա...  
մեկ ել կինը սիրում ա ույժը... վոր մարդու  
ձեռը այ...

Զինվորը զրպանից հանեց աջ ձեռքը և վեր  
քաշեց թկը... Նրա ձեռքը սպիտակ եր, ուժեղ,  
ծածկված վոսկեգույն մազերով։

— Վո՞տն ել, ձեռն ել, ամեն ինչը պիտի լինի իրա կարգին... Եղենց ա հարկավոր... Այս ինձ կնանիք սիրում են: Յես իսկի դրանց յետեիցը չեմ ընկնում, դրանք են, վոր հինգով, տասով կպչում են ու պոկ չեն գալի...

Նա նստեց ալյուրի պարկի վրա, և յերկար ժամանակ պատմում եր, թե ինչպես կանայք հետևում են նրան, և թե նա ինչպիսի խիզախություններ ե արել: Հետո, յերբ գնաց և նրա յետեից դռւող փակեցին՝ մենք յերկար ժամանակ լոել եյինք, և մտածում եյինք նրա պատմածների մասին: Իսկ հետո, բոլորը, կարծես թե միանգամից սկսեցին խոսել, և իսկույն յերկաց վոր նա մեզ բոլորիս դուր եր յեկել: Քնքուշ հասարակ և լավ մարդ եր նա, վոր յեկավ, նըստեց մեզ հետ և սկսեց ընկերաբար խոսել, մենք շարունակ խոսում եյինք այն հաջողությունների

մասին, վոր նա ձեռք կբերի դերձակուհիների  
մոտ, վորոնք մեզ հանդիպելիս աչքերը խոժոռում  
եյին կամ թեքում ճանապարհը: Բայց մենք միշտ  
ել հետաքրքրությամբ նայում եյինք նրանց:  
Նրանք ամեն որ անց եյին կենում մեր պատու-  
հանների առաջից, ամառը գույն զգույն զլխարկ-  
ներով, իսկ ձմեռը տաք վերարկուն հագներին:  
Բայց մենք խոսում եյինք նրանց մասին շատ  
կոպիտ և անամոթ, վոր յեթե նրանք լսեյին  
գուցե ուշաթափ լինեյին զայլութից:

— Մենակ թե՝ տղերք... Տանյուշկին ել  
ձեռքից... հանկարծ վրա բերեց հացթուխը

ՄԵՆՔ բոլորս լոեցինք։ Այդ խոսքերը մեզ  
խորը վրդովեցին։ ՄԵՆՔ կարծես թե մոռացել  
եյինք Տանյայի մասին։ Մի՞ գուցե զինվորը նրան  
խլի մեզանից իր առողջ, գեղեցիկ կազմվածքով։  
Հետո սկսեց մի սուր վեճ, փոմանք ասում եյին,  
վոր Տանյան իրեն թույլ չի տա այդպիսի ստո-  
րությունն, մի քանիսը պնդում եյին, վոր նա  
կյենթարկվի զինվորին, իսկ մի քանիսը առա-  
ջարկում եյին, վոր յեթե զինվորը համարձակվի  
ձեռք տալ աղջկան՝ ջարդել նրա կողերը։ Բոլո-  
րը վորոշեցին հետևել Տանյային և զինվորին,  
զգուշացնել աղջկան, վոր նրա մոտ չգնա… Այդ-  
պես ել վերջացավ մեր վեճը։

Անցան ամիսներ, գինովոր խմորեղեն եր շի-



նում և զբոսնում դերձակուհիների հետ։ Նա  
հաճախ մեղ մոտ եր գալիս, բայց չեր խոսում  
իր խիզախությունների մասին։ Նա միայն վոլո-  
րում և լպսում եր բեխերը։

Տանյան ամեն առավոտ գալիս եր «Բլիթ-  
ների», և ինչպես միշտ՝ ուրախ եր, սիրալիր։  
Մենք փորձեցինք նրա հետ խոսքի բռնվել զին-  
վորի մասին, — նա նրան հորթ անվանեց և սկը-  
սեց ծիծաղել։ Յեվ այդ բանը մեղ մեծ հանգը-  
տություն պատճառեց։ Մենք պարծենում եյինք,  
վոր Տանյան մյուս դերձակուհիների նման չի  
քսվում զինվորին։ Տանյայի վերաբերմունքը դե-  
պի զինվորը մեղ բոլորիս լարեց զինվորի դեմ։  
Այդ աղջկան մենք ավելի ու ավելի եյինք սիրում  
և ամեն առավոտ սպասում նրան անհամբեր։

Բայց մի որ զինվորը քիչ խմած մեղ մոտ  
յեկավ և սկսեց քրքջալ, իսկ յերբ մենք հար-  
ցըրինք թե ինչի վրա յե ծիծաղում՝ նա ասաց.

— Ինձ վրա կոիկ են գցել... Լիդկան ու  
Գրուշկան... վո՞-ոնց եյին իրար տալի... հա, հա  
իրար մազերը պոկ տվին... տեսնելու բան եր,  
վոնց եյին իրան կպել... հա, հա... ել իրար  
ճանկել, ել իրար շորերը պատռել... ծիծաղ։  
Զարմանալին են ա, վոր եղ կնանիք չեն իմա-  
նում իրաշ կարգին կպցնելը, ճանկում են իրար  
կատվի պես... հա հա։

Նա նստել եր և քրքջում եր ուրախ, բա-  
վական։ Մենք լուել եյինք, այս անզամ նա ծա-  
կում եր մեր աչքը։

— Յես ել եմ մնում զարմացած, թե վոնց  
իմ բանը աջող ա գնում։ Ծիծաղելու բան ա,  
աչքով անում եմ թե չե՝ զլխիս են թափում...

Նա խորը հաճույքով տրորում եր իր ծնկնե-  
րը, և մեղ նայում հարբած աչքերով։ Կարծես  
թե ինքն ել իսկապես զարմացել եր իր բախտի  
վրա։ Նրա հաստ, վարդագույն յերեսները ավելի  
եյին վառվել, նա վոլորում եր բեխերը և լպսում։

Մեր հացթուխը ջղային և արհամարհական  
ձեռվ շուռ եկավ և ասաց.

— Ինչ մեծ բան ա վոր ճյուղեր պոկելը,  
կարո՞ղ ես՝ ուժդ կաղնու վրա փորձի...»

— Այսինք՝ եղ դու ի՞նձ ես ասում, — հար-  
ցրեց զինվորը։

— Գնա, քո...»

— Ի՞նչ...»

— Վոչինչ... անց կացավ։

— Չե, չեղավ, բանն ինչումն ա, ասա, եղ  
ի՞նչ կաղնի յա։

Մեր հացթուխը չպատասխանեց։ Նա ջղայ-  
նությունից սկսեց ավելի արագ աշխատել։  
Ներս եր գցում բլիթներն ու գեռ հում դուրս  
բերում։ Նա մի բոպե մոռացավ զինվորին։ Բայց

զինվորը սաստիկ անհանգստացել եր, նա վոտքի  
յելավ և մոտեցավ վառարանին։ Այնքան հուզ-  
վել եր, վոր չեր նկատում, թե կարող ե մըոտվել։

— Չե, դու ասա, եղ ո՞վ ա, դու իմ սրտին  
կպար... Յես, վոր վոչ մի՛ աղջիկ ձեռից բաց չեմ  
թողել... Իսկ դու եղակես անպատիվ ես անում  
մարդու...»

Թվում եր, թե իսկապես, սաստիկ վիրա-  
վորվել եր նրա ինքնասիրությունը. կարծես թե  
նա իրեն գնահատում եր միայն իր առնական  
ընզունակությունների համար։ Գուցե և, իսկա-  
պես վոր նա ուրիշ արժանիք չուներ։

Չե՞ վոր կան մարդիկ, վորոնք ամենաթան-  
կագին բանը համարում են իրենց հոգեկան կամ  
մարմնական այս կամ այն հատկությունը։ Նրանք  
ապրում են միայն այդ հատկությամբ։ Այդ ենրանց  
բավականությունն ու ամբողջ կյանքը։ Նրանք  
ուրիշ ել վոշինչ չունեն։ Յեթե զրկես նրանց  
իրենց այդ միակ ունեցածից՝ կդառնան թըշ-  
վառ արարածներ։ Շատ անգամ մարդկանց հոգին  
այնքան աղքատ ե լինում, վոր նրանք սկսում  
են ապրել թեկուզ իրենց վորեե թերությամբ։

Զինվորը սաստիկ վիրավորված ինքնասիրու-  
թյամբ ստիպում եր հացթուխին, վոր նա ասի.  
— Չե՛, յես քեզանից ձեռ չեմ քաշի, եղ  
ի՞նչ կաղնի յա։

— Ասե՞մ, — հանկած դարձավ գեղպի նա հաց-  
թուխը։

— Դե՛ ասա։  
— Տանյային ճանաչո՞ւմ ես.  
— Ե՛.  
— Ասացի ելի՛, կարա՞ս՝ մի փորձի։  
— Յե՞ս.  
— Դո՞ւ.  
— Նա ի՞նչ ա վոր. թքած...  
— Կտեսնե՞նք ելի...  
— Կտեսնե՞նք, բայս ի՞նչ։ Հա հա...  
— Նա քեզ...  
— Մի ամիս ժամանակ.  
— Ա՞նց կաց, հսդուհավ.  
— Երկու շաբաթ։ Յես ցույց կտամ։ Ո՞վ ա,  
Տանյա՞ն՝ թքա՛ծ...  
— Դե՛, բացվի՛ եստեղից... խանգարում ես.  
— Երկու շաբաթ։ Ա՛յ քեզ...  
— Ա՞նց կաց, ասում եմ։  
Մեր հացթուխը հանկարծ կատաղեց և նրեց  
զինվորին։ Զինվորը հեռացավ, սեմից մտիկ  
տվեց մեզ վըա. «Լա՛վ», ասաց նա չարությամբ  
լեցված։  
Վեճի ժամանակ մենք լոել ու հետաքրքրու-  
թյամբ լսում եյինք։ Բայց յերբ զինվորը գնաց,  
մեր մեջ բացվեց տար խոսակցություն։

Մեկը հացթուխն նկատեց.

— Մի բանի նման չեր արածդ, Պավել:

— Բո բանը չի, աշխատի, —պատասխանեց հացթուխը դաժանությամբ:

Մենք զգում եյինք, վոր զինվորը մի բան կանի, և վոր Տանյային վտանգ ե սպառնում: Մենք այդ զգում եյինք, և մի խուլ ցավ կըրծում եր մեր սիրաը, բայց միաժամանակ, մեզ համար շատ հետաքրքիր եր գործի վախճանը: Ի՞նչ կլինի արդյոք, Արդյոք Տանյան կկարողանան դիմագրել զինվորին... Յեվ համարյա թե բոլորը ճշում եյին հավատացած.

— Տանյան: Նա չի յենթարկվի: Նրա հետ գլուխ դնելը հե՛շտ չի:

Մենք չափազանց շատ ուզում եյինք փորձել մեր բերդի ամրությունը: Մենք կաշվից դուրս եյինք գալիս և իրար ապացուցում, վոր մեր այդ կուռքը կղիմանա զբոհների: Ի վերջո, մեզ թվաց, վոր մենք դեռ շատ քիչ գրգռեցինք զինվորին: Պետք եր ավելի շատ վիրավորել նրա ինքնասիրությունը: Այդ որից մեզ պատել եր մի ջղայնություն, մենք յերբեք այդպես լարված չեյինք յեղել: Մենք ամբողջ որը վիճում եյինք միմյանց հետ, մեր լեզուն բացվել եր: Մեզ թվում եր, վոր մենք սատանի հետ բռնվել ենք մի վտանգավոր խաղի, և մեր գրավականը Տան-

յան եւ Յեվ յերբ խմորեղեն շինողները ինձ տացին, վոր զինվորը արդեն սկսել ե օմեր Տանյային հետեւել՝ մենք սկսեցինք այնպես լարել մեր ջիղերը, մեր որը այնքան հետաքրքիր եր անցնում, վոր չեյինք նկատում, թե ինչպես տերը ոգտվելով մեր անուշադրությունից՝ ծանրաբեռնում եր մեզ, տալով որեկան տասնեւ չորս փթից ավելի խմոր: Կարծես թե մենք չեյինք ել հոգնում: Ամեն առավոտ մենք Տանյային սպառնում եյինք անհամբեր: Յերբեմն թվում եր մեզ, վոր նա հիմա կգա, բայց այլևս չի լինի այն Տանյան, այլ ուրիշը...

Այնուամենայնիվ, մենք նրան վոչինչ չեյինք պատմում մեր վեճի մասին: Վոչինչ չեյինք հարցնում նրան և առաջվա պես սիրավել եյինք լինում գեպի նա: Բայց այժմ, արդեն պիտի ասել, վոր մեր սրտերում մտել եր մի նոր զգացմունք գեպի այդ աղջիկը, մի սուր, անբացատրելի զգացմունք...

— Տղե՛ք, եսոր ժամանակը լրանում ա, — ասաց մեզ հացթուխը մի առավոտ:

Մենք գիտեյինք այդ առանց նրա ասելուն: Բայց ելի ուզում եյինք լսել: Հուզմունքը բռնել եր մեզ:

— Այ, հիմա Տանյան կգա՝ մտիկ կտաք... վրա բերեց հացթուխը:

Բայց մի ուրիշը մրմռաց.

— Մտիկ տալով ի՞նչ կարելի յա իմանալ  
վոր:

Յեվ նորից ծագեց մի տաք, աղմկալի վեճ:  
Վերջապես այսոր մենք կիմանանք, թե վորքան,  
մաքուր և անմատչելի յե այն անոթը, վորի  
մեջ մենք ածել ենք մեր լավագույն զգացմունքը:  
Այդ առավոտ միայն, մենք ավելի սուր կերպով  
զգացինք, վոր իսկապես մի շատ վտանգավոր խաղ  
ենք սկսել, և վոր յեթե մեր կուռքը չդիմանա  
այդ փորձության՝ ապա նա կորած և մեզ համար  
ընդմիշտ: Մենք լսում եյինք շարունակ թե ինչ-  
պես զինվորը համառ կերպով հետեւում եր Տան-  
յային, բայց մեզանից վոչ վոք չեր հարցնում,  
ի՞նչ և մտածում աղջիկը: Իսկ նա շարունակում  
եր առաջվա նման, ամեն առավոտ զալ բլիթնե-  
րի, և ամեն ինչ այնպես եր, ինչպես առաջ:

Այդ առավոտ, մենք շուտով լսեցինք նրա  
ձայնը.

— Բանդարկվածնե՛ր, յես եկա...

Մենք շտապեցինք բանալ դուռը, բայց հա-  
կառակ սովորականի, բոլորը լոել եյին: Մենք  
միայն նայում յենք նրան ագահաբար, բայց  
չեյինք իմանում, ի՞նչ հարցնել ինչից սկսել,  
Յերեկ նա զարմացավ մեր այդ անսովոր լուս-  
թյունից, և իսկույն, մենք տեսանք, վոր նա  
դունատվեց, ու անհանգիստ ձայնով հարցրեց,

— Եղ ի՞նչ ե... եղպես:  
— Իսկ դու, — դարձավ նրան մոայլ հայ-  
թուխը:

— Ցես. ի՞նչ:  
— Վո՞-ոչինչ:  
— Շո՛ւտ արա, բլիթնե՛ր տուր:  
Առաջ, նա յերբե՛ք այդպես չեր շտապել:  
— Լավ, չե՛ս ուշանա, — ասաց հացթուխը  
հառելով աչքերը նրան:

Այն ժամանակ, նա շուռ յեկավ և փակեց  
դուռը իր յետեկից:

Հացթուխը դարձավ իր գործին և ընդհատ,  
տանջալի ձայնով ասաց.

— Ուրեմն... եղպես... Այ զինվոր, սըիկա...  
Մենք վոչսարի հոտի նման, իրար հրելով,  
մոտեցանք սեղանին և սկսեցինք մեր աշխա-  
տանքը: Շուտով մեկը առարկեց.

— Բայց գուցե դեռ...  
— Ե՞՞՛, դուն ել բան ասացիր, — ճշաց հաց-  
թուխը:

Մենք բոլորս գիտեյինք, վոր նա ավելի յե  
բան հասկանում, քան մենք, զրա համար ել  
հարցը մեզ համար լուծված եր: Իհարկե հաղ-  
թել եր զինվորը... մենք տիսուր եյինք և ան-  
հանգիստ...

Ժամի 12 ին, ձաշի ժամանակ, մեզ մոտ

յեկավ զինվորը։ Նա նորից—ինչպես առաջ—  
հագնվել եր մաքուր և խնամքով։ Նա մեզ եր  
նայում, բայց մենք չեյինք կարողանում մեր  
աշքերը դարձնել դեպի նա...»

— Հը, հարգու պարոններ, ուզում եք ձեզ  
ցույց տամ զինվորի շնորքը...—ասաց նա հպարտ  
և քմծիծաղ տալով,—դուրս եկեք մարագը, և  
դուն ճեղքերից մտիկ տվեք... հասկացաք։

Մենք իրար հրելով ներս մտանք մարագը  
և սկսեցինք ճեղքերից նայել։ Մենք յերկար  
չսպասեցինք... Շուտով, շտապ քայլերով բակը  
մտավ Տանյան, և թռչելով ցեխի ու ջրի գոլե-  
րից անցավ մարագը։ Հետո, դանդաղ, քթի տակ  
սուլելով, նրան հետևեց զինվորը։ Նա ճեռները  
դրել եր գրպանը, բեխերը վոլորել...»

Անձրեւ եր գալիս, և մենք աեսնում եյինք,  
թե ինչպես կաթիլները ընկնում եյին գոլի վրա  
և կնճիռներ առաջնում ջրի յերեսին։ Մի  
խոնավ, գորշ և ծանր որ եր։ Կտուրներին դեռ  
նստել եր ձյունը։ Բակը ցեխոտ եր, թաց։ Ան-  
ձրել տեղում եր դանդաղ, կաթիլները չխկում  
եյին ընկնելիս։ Մենք մրասում եյինք, հատել  
եր մեր համբերությունը...»

Մարագից առաջինը դուրս յեկավ զինվորը։  
Նա գնում եր ուղիղ, դանդաղ, ձեռքերը գրպա-  
նում, բեխերը վոլորած այնպես՝ ինչպես միշտ

Հետո, դուրս յեկավ Տանյան։ Նրա աչքերը...  
Նրա աչքերը փայլում եյին ուրախ ու յերջանիկ։  
Նա ժպտում եր։ Քայլերը դնում եր զգույշ,  
մի առանձին բերկրանքով,—կարծես թե յերա-  
զում լիներ նա...»

Մենք չկարողացանք այդ բանը տանել։ Բո-  
լորս միանգամից դուրս յեկանք բակը ու սկսե-  
ցինք սուլել, ճաշ, ծիծաղել կոպտաբար...»

Նա ցնցվեց, յերբ տեսավ մեզ, և խրվեց  
ցեխի մեջ։ Մենք շրջապատեցինք նրան և սկսե-  
ցինք անամոթ կերպով դուրս տալ ամեն տեսա-  
կի խոսքեր։

Մենք անում եյինք այդ դանդաղ, առանց  
աղմուկի։ մենք գիտեյինք, վոր նա տեղ չունի  
գնալու, վոր գտնվում ե մեր ողակի մեջ, և մենք  
անխնա նրա զլսին եյինք թափում մեր սրտի  
դառնությունը... Զգիտեմ ինչու, մենք նրան  
չծեծեցինք։ Նա կանգնել եր մեջ և շուռ եր  
տալիս գլուխը մեկ այս, մեկ այն կողմը ու լսում  
մեր վիրավորանքները, իսկ մենք ավելի ու  
ավելի կատաղի եյինք դառնում...»

Գույնը թռավ նրա յերեսից։ Նրա կապույտ  
աչքերը, վոր քիչ առաջ փայլում եյին յերջան-  
կությամբ՝ լայն չովել եյին, շրթունքները դո-  
զում եյին և կուրծքը բարախում։

Իսկ մենք նրան շրջապատած, լուծում եյինք

մեր վրեժը, վորովհետեւ նա կողոպտել եր մեզ:  
Նա մեզ եր պատկանում, մենք վատնել եյինք  
նրա վրա մեր ամենալավ ունեցածը, մեր միակ  
զգացմունքը, մենք, քսանվեց հոգի սիրում և  
հարգում եյինք նրան, և մեծ եր մեր վիշտը:  
Նա արժանի յեր վիրափորանքի: Յեվ մենք վի-  
րափում եյինք նրան... Նա շարունակ լուռ  
եր, շարունակ դողում եր և մեզ նայում կատա-  
ղի աչքերով...

Մենք ծիծաղում եյինք, ճշում, վոռնում...  
Մոտ յեկան ելի ուրիշ մարդիկ... ինչ վոր մեկը  
ձիգ տվեց նրա թևնոցը...

Հանկարծ նրա աչքերը շողացին, նա ձեռքը  
մեկնեց, ուղղեց իր մազերը և բարձրաձայն, բայց  
հանգիստ՝ ասաց մեր յերեսին.

— Այ դուք: Բանդարկվածնե՛ր, թշվառա-  
կան մարդիկ...

Յեվ նա շարժվեց դեպի մեզ, ուղղակի մեզ  
վրա, վորպես թե մենք դիմացը չլինեյինք: Յեվ  
իսկապես վոչ վոք չկարեց նրա ճանապարհը:

Դուրս գալով մեր ողակից, նա շարունա-  
կեց իր ճանապարհը ու առանց յետ նայելու՝  
զգանքով կրկնեց.

— Այ դուք, անպիտան արարածնե՛ր...

Յեվ գնաց՝ գեղեցիկ, հալարտ:

Իսկ մենք մնացինք խոնավ, անձրեսու բա-

կում ցեխի մեջ, անարև յերկնքի տակ...

Հետո, մենք ել գնացինք մեր գործին, խո-  
նավ, քարաշեն նկուղը: Ինչպես առաջ, արեք  
յերբեք չեր թափանցում մեր նկուղը և Տանյան,  
ել չեր գալիս յերբեք...

1899 թ.



## ՀԱԽՆ ՊԵՏՀՐԱՏԻ ՄՈՍԿՎ. ԲԱԺԱՆՄ.

2. ՊԼԵԽԱՆՈՎ.— «Սոցիոլոգիական աշխատություններ»: Յերկերի ժողովածու III հատոր: Թարգմանություն [REDACTED] Դ. Մեհրաբյանի:

### ՍՈՑԻԱԼ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

1. Ա. ՇԱՀՈՒՅՑԱՆ.— «Յերկերի ժողովածու» — խմբագրություն և նախարան Ա. Կարինյանի:
2. Ա. ԿԱՐԻՆՅԱՆ [REDACTED] — «Ալ. Մարտունի-Մյասնիկյան»:
4. Ա. ԿԱՐԻՆՅԱՆ.— «Ս. Շահումյանի կյանքն ու գործունեությունը»:
5. ՊԼԵԽԱՆՈՎ.— «1825 թ. գեկտեմբերի 14-ը»:

### ՆԱՐԶԱԿԱՆ ՍԵՐԻԱ

#### ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. ԳՐՈՍՍ.— (Նկարներ), տեքստ Կ. Հալաբյանի:
2. ԳՈՅԻԱ.— (Նկարներ), տեքստ Մ. Մազմանյանի:
3. ԱՏԵՑՆԵՐՆ.— (Նկարներ), տեքստ Ա. Կարինյանի:
4. ՊԼԵԽԱՆՈՎ.— Ֆրանսական թատերգությունն ու նըկարչությունը XVIII դարում. — թարգմ. Ստ. Զորյանի,
5. ՑԱԿՈՒԼՈՎ.— «Ինքնակենսագրություն և նկարներ»:

### ԳԵՂԱՐԿԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

1. ՎԱԵՎՈԼՈԴ ԻՎԱՆՈՎ.— «Զբանագնացք № 1469»;
2. ԵՐԵՆԲՈՒՐԳ.— «Կոմունարի ծիսամորթը»:

## ՀԱԽՆ ՊԵՏՀՐԱՏԻ ՄՈՍԿՎ. ԲԱԺԱՆՄ.

### ԼԵՆԻՆՑԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

#### ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. ԼԵՆԻՆ.— Ժողովածու [REDACTED] Ա. Կարինյանի [REDACTED] խմբագրությամբ:
2. Ա. ԴԵԲՈՒԲԻՆ.— «Լենինը վորպես մարտնչող մատերիալիստ» — հեղինակի նախարանով հայկական հրատարակության առթիվ:
4. Մ. ՊԱՎԼՈՎԻՉ.— «Լենինը և ազգային հարցը»:
5. Ա. ԿԱՐԻՆՅԱՆ.— «Լենինը և պետությունը»:

7. Ա. ԼԵՆԻՆ.— «Մարքսի և մարքուզմի մասին»:
8. Ի. ՍՏԱԼԻՆ.— «Լենինի և լենինիզմի մասին»:

### ԳԻՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԱՆՐԱՄԱՏՁԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ

1. Ա. ՄԱՐՔՍ և Ֆ. ԵՆԳԵԼԻ. — «Կոմունիստական մանիֆեստ»: [REDACTED] Դ. Ռիազանովի պարզաբնությունով և նախարանով հայկական հրատարակության առթիվ:
2. Դ. ՌՅԱԶԱՆՈՎ.— «Մարքս և Ենգել».

### ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԿԱՍՏԻԿՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

1. ՊԼԵԽԱՆՈՎ.— «Մոնիստական հայացք պատմության վրա»:

# ՀԱԽՀ ՊԵՏԱՐԱՏԻ ՄՈՍԿՎ. ԲԱԺԱՆՄ.

## ԴՊՐՈՑԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

1. ԿՈՐԴԵԼԻԱ. — «Գնացքը փրկող աղջիկը»:
2. Կ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ. — «Անմահական կայծ», (փոխադր.),
3. ՌՈՒԲԻ ՌԻԱՅԵՂ. — «Պատանի արքա»:
4. «ՊԱՏԾՆԻ ՀԵՐՈՈ»:
5. Ա. ՎԵՐՇԻՆԻՆ. — «Արջի արկածները»:
6. Պ. ԶԱՄՈՅՍԿԻ. — «Նամակ Լենինին»:
7. Ն. ԼԵԶՋԻՆՍԿԻՅ. — «Աշխատանքի պապիկը»:
8. ԱՏ. ԶՈՐՅԱՆ. — «Ծովանը»:
9. «ԱՐԱՀԱՆՔՈՒՄ»:
10. «ՇԱՄՈՒՆՅ. — «Պատկոմ Սուրենը»:
11. ԱՏ. ԶՈՐՅԱՆ. — «Յերկաթուղին»:

Главлит № 58345.

Тираж 3000.

Типография Госиздата ССР Армении. Армянский п., 2.

ՀՀ Ազգային գրադարան



NL0312717

10.804

ԳԻՒԸԸ 15 4.

